ԳԱՌՆԻ

ГАРНИ

GARNY

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

B
921

Ճարտ. Ն. ԲՈՒՆՅԱԹՅԱՆ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐ ՏՐԴԱՏԻ ՊԱԼԱՏԻՆ ԿԻՑ ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑՈՒՄ

—

Архитектор-художник Н. БУНИАТОВ

Языческий храм при дворце Трдата в крепости Гарни

—

Architect. N. BOUNIATOFF

Temple païen à côté du palais de Tiridate dans la citadelle de Garni

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ
ՅԵՐԵՎԱՆ — 1 9 3 3

ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի
ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ա. ՄՈՍԻՍՅԱՆԻ
անվան գրադարան
ՀՍՍՌ Գիտ. Ակադ.
9597-54

Տեխ. ձեվավորումը կատարել է Ս. Եփրիկ։ Եջերը կապել է Ավ. Կողաբաշյան

Պետհրատի տպարան. Գլավլիտ 9213 (ք). Պատվեր 1216. Տիրաժ 1000.

ՀԵԹԱՆՈՍՍԿԱՆ ՏԱՃԱՐ ՏՐԴԱՏԻ ՊԱԼԱՏԻՆ ԿԻՑ ԳԱՌՆԻ ԱՄՐՈՑՈՒՄ

Ցերեվանից 27 կիլոմետր հարավ-արևվելք գտնվում է Բաշ Գառնի հայաբնակ մեծ գյուղը։ Գյուղի հարավային ծայրում, մեծ ճանապարհից մի քիչ անցած դեպի ձախ, տեղավորված են Գառնի ամրոցի ավերակները։ Տեղի բնությամբ գեղեցիկ, շրջապատված լեռներով, պատմականորեն հռչակաւոր Գառնին յերբեմն ծաղկած քաղաքաշինական էր, ուր այգիների մշակույթը հասած էր բարձր կատարելության։ Գառնի ամրոցում պահվել է հոյակապ մի հուշարձան, հռոմեական արվեստի ծաղկման շրջանի գործ, վորի ավերակները դեռ հնագույն ժամանակներից շրջակա ազգաբնակության կողմից «Տրդատա թաղա» անունն են ստացել. այս կոչումով են ընտրոշվում նաև յերբեմնի ծաղկած ամրոցի ներկայիս ամայացած ավերակները։ Չնայած այս կոչումի ընդհանրացած լինելուն, նա ամենևին չի արտահայտում այն բացառիկ դերը, վոր այդ հուշարձանը խաղացել է հայ արվեստի պատմության մեջ։

Գյուղից դեպի հուշարձան տանող ճանապարհը, վոր անցնում է ապառաժի յեզերքով, նման է մի լայն ծառուղու, բարդիների և դարավոր ընկուզենիների շարքերով, վոր հատնում է ամրոցի մուտքի մոտ։ Ամրոցի մուտքը շինված է տուֆ քարով բազալտի հիմքի (ցոկոլի) վրա։ Ամրոցի պատերը տեղ տեղ միայն պահպանվել են մինչև այսոր. ծառուղին մուտքի մոտից նորից շարունակվում է ամրոցի ներսում. իր յերկու կողմերում ցրված, ավերակներից թափված քարերի միջով ծառուղին մտնում է մի փոքրիկ հրապարակ, վորտեղ և գտնում ենք փոքրիկ շենքի ավերակները։ Այդ շենքի միայն ներքևի մասն է մնացել իր տեղում, սակայն նրանից անդամ յերևում է, վոր այդ կրոնական շենք է — տաճար։

Ամրոցի տերրիտորիան տեղավորված է յեռանկյունու վրա, վոր կազմված է Ազատ գետի (Արաքսի մեջ թափվող) ձորի և նրան միացած մինչև Բաշգառնի գյուղը ձգվող ձորավորի միջև։ Յեռանկյունու մակերեսը հավասար է մոտ յերեք հեկտարի և ունի մոտ 500 մետր բարձրություն գետից։ Այդ յեռանկյունին իրեն շրջապատող լեռների և բլուրների միջև կանգնած է վորպես թերակղզի, վոր յերկու կողմից պաշտպանված է ապառաժներով, իսկ յերրորդ կողմից կտրված ամրոցի պարսպով, ուր և գտնվում է ամրոցի միակ մուտքը։ Յեռանկյունու վերին ծայրը զբաղում է պալատական տաճարը, վոր մի քիչ առանձնացած դիրք ունի այնտեղ յերբեմն յեղած պալատական շինքերի հանդեպ։ Նրա դիմաց, ձորի մյուս կողմում, յերևացող ամբողջ շրջապատը բռնված է բարձրարերձ լեռներով։

Գառնիի տեղի տերրիտորիալ առանձնահատկությունները աշխարհագրական և բարտեղագրական հիմնավորումն են տալիս այդ կոտրի վրա պաշտպանության կետի առաջանալուն, վորով և անշուշտ բացատրվում է ամրոցի շինության համար այդ տեղի ընտրությունը։

Ցի՞րը և հիմված Գառնին — հայանի չէ. անկասկած է միայն այն, վոր նրա սկիզբը վերաբերում է խոր հնության։ Այդ մասին վկայում են այն հին հայկական ավանդությունները, վոր պահպանել է Մովսես Խորենացին (Ա. — 12). նա ասում է, վոր այդ վայրում առաջինը բնակություն հաստատեց Հայկի ժառանգներից Գեղամը՝ Ամասիայի վորդին. այստեղ նա լեռան ստորոտում մի ամուր ձորակի մեջ շինում է իր համար ձեռակերտ և անվանում Գեղամ, վոր հետո իր Գառնիկ թոռան կողմից վերակոչվում է Գառնի*։ Մ. Խորենացին հաղորդում է դարձյալ, վոր Տրդատ Գ. ի կատար է ածում Գառնի ամրոցի շինությունները «վորձաքար և կոփածո վիմոք, յեր-

* Մ. Խորենացի Պատմ. հայոց. Ա. գ. 12 «Գեղամ ... առ ոտամբ նորին լերինն ի ձորակի միում ամրոց շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի»

կաթողամ և կապարով» իրար միացրած։ այնտեղ նա իր քույր Խոսրովադիսի համար շինում է նաև «տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի գրոշվածովք, բարձր քանդակաւ», թողնելով այնտեղ նաև ի հիշատակ յուր, արձանագրության հելլեն գրով։*

Հայ ուսումնասիրողներից Ալիշանը «Այրարատ»ում (եջ 361 — 372) տալիս է Գառնիի հուշարձանի պատմական թռուցիկ տեսարկը։ Գառնի ամրոցի կառուցման և նրա պալատի ու տաճարի շինության ժամանակի վերաբերյալ տեղեկությունները նա քաղում է Խորենացու պատմությունից։ Այնուհետև նա մեջ է բերում ոտարյերկրացի ճանապարհորդների և ուսումնասիրողների նկարագրություններն ու հիացմունքի գովեստները Գառնիի տաճարի մասին — Դյուբուայի, Քերպորտերի, Մորիյերի, Տելֆերի, որոնք յեղել են Գառնիում 1814—78 թ. թ. ընթացքում։ Ի միջի այլոց Դյուբուան ասում է, որ հուշարձանը վերականգնել դժվար չէ, քանի որ տաճարի գլխավոր մասերը, շենքի բեկորները, մնացել են ընկած նույն տեղում։ Տաճարի ավերակների նեկա վիճակը միանգամայն համապատասխանում է հիշյալ ճանապարհորդների նկարագրություններին։ Այդ ուսումնասիրողներից և ոչ մեկը չի կասկածում որ հուշարձանը պատկանում է հռոմեական արվեստի վաղագույն շրջանին։ Ալիշանն իր աշխատության մեջ հրատարակել է տաճարի գլխավոր ճակատի վերակազմության ուրվագիծը, ինչպես նաև ամրոցի ընդհանուր պլանը պալատական շենքերի նշումներով։

Տաճարի շինության ժամանակի և շինողի վերաբերյալ հարցում Ալիշանն անում է հետևյալ յենթադրությունը, որ Խորենացին հիշատակելով տաճարի շինությունը Տրդատ մեծի կողմից՝ ի նկատի ունի նրան ոչ թե իբրև շինող, այլ տաճարի նորոգող։ Ալիշանի այս յենթադրությունը կարելի չի ընդունելի համարել։

Հին մատենագրության այս բոլոր տեղեկությունները Գառնիի կառուցվածքների մասին կցկտուր են և հակասական, մանավանդ տաճարի վերաբերյալ մենք չենք գտնում որևե հիշատակություն, ուստի և մնում է անհայտության մեջ այդ հուշարձանի շինության ճիշտ ժամանակը և թե ով է նրա շինողը։ Սրանք հիմնական հարցեր են, որոնց լուծումը նեկա դեպքում կարող է տալ միմիայն հուշարձանի հնագիտական — ճարտարապետական ուսումնասիրությունը։

Չնայած Գառնիի տաճարի ավերակացած վիճակին, առաջին խոկ հայացքից կարելի չի լինում վորոշել նրա տիպը, սա հռոմեական տաճարների ընորոշ տիպն է, հարուստ յան արվեստի ոգտագործումով մինչև III դար մեր թվ.։ Տաճարի ընդհանուր տեսքը ներկայացնում է մի կառուցված բարձրադիր հիմքի վրա (podium), մուտքի բաց աստիճաններով և խորը նախագավիթով։ Այս ճարտարապետական ձևը հաստատուն է դարձնում այն համոզումը, որ հուշարձանը պատկանում է հռոմեական արվեստի վաղագույն շրջանին, և հերքում է հայ մատենագրության մեջ պահված տեղեկությունն այդ մասին։ Մենք դեռ կտեսնենք մի շարք այլ ձևեր ևս, էլ ավելի մեզ համոզեցնող, որ յեթե մատենագրության մեջ հուշարձանի հետ կապված է Տրդատի անունը, այդ ոչ թե Տրդատ մեծն է III — IV դարում, այլ Տրդատ Ա.-ը, որ թագավորեց I դարում յերկրորդ կեսին (66 թվ. մեր թվ.)։ Այդ պարզ ցույց է տալիս տաճարի ամբողջ ճարտարապետությունը։

Անկախ դրանից, մեզ հայտնի չի պատմությունից, որ Տրդատ Ա.-ի թագավորության շրջանում, ինչպես և իր հաջորդի ժամանակ, բարեկամական հարաբերություններ ստեղծվեցին Հռոմի հետ, որոնք նըպաստեցին առևտրի զարգացմանը Հայաստանի հետ, ինչպես և ընդհանրապես յերկրի բարեկարգմանը՝ յերբ համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում վերականգնվեց Արտաշատը Հռոմայեցի վարպետների ձեռքով և Ներոնից ստացված մեծագներով։ (Դիոն Կաս. 63, 7)։ Գառնին հիշատակվում է Տակիտոսի կողմից որպես ամրոց. (Tac. Ann. 12, 45 Castelum Gorneae)։

Հուշարձանի ճարտարապետական ձևերի ակնհայտանի նմանությունը հունա-հռոմեական ճարտարապետության, ոչ մի կասկած չի թողնում, որ զուտ հունա-հռոմեական ձևերի առաջանալը Հայաստանի խորքում, տեղի չի ունեցել ոչ անմիջականորեն, զոնե այն ազդեցությունների մասնակցությամբ, որոնք կարող եյին ներմուծվել Հայաստանի և Հռոմի մեջ յեղած անընդհատ կոնվենների և այլ հարաբերությունների շնորհիվ։

Հայաստանում հռոմեական ճարտարապետության յերևալու նման փայլուն որինակը հաստատում է անուշտ, որ հելլենիստական արդիյունների ազդեցությունն այնքան եր ուժեղ այդ ժամանակաշրջանում, որ հռոմեական ճարտարապետության ձևերի զործադրումն անխուսափելի յեր անգամ տաճար կառուցելիս իբրև ժամանակի պահանջ։

Հուշարձանի եվ ավելի ուշագիր քննումը մեզ բերում է այն յեզրակացության, որ տաճարի ընդհանուր կառուցվածքը և մանրամասնությունների մշակումը բավականաչափ ճիշտ կերպով վորոշում են հուշարձանի ժամանակը ոչ ուշ քան առաջին դարը մեր թվ.։

Վորպեսզի վորոշել և վորակել Հռոմի ազդեցության ուժը Հայաստանի վրա՝ ան, բաժիշտ է մեջ բերել, թեկուզ համառոտ հոգամասական մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տեղի ունեցած հռոմեա-պոնտական յերկարատև կռվի մասին։

Անտիկ աշխարհը գիտեր Արևելքը, նրա հետ և Հայաստանը, շատ հնուց. Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները (IV դ. մեր թվ. առաջ) փոխեցին Իրանի իշխանությունն ու ազդեցությունը Արևելքի վրա՝ հելլենիստականով, մինչև Հունաստանի հռոմեական շրջան դառնալը — 146 թվ. մեր թվ.։

Հռոմեական Ասիայի ծնունդ առնելու հետ միաժամանակ՝ սկսում է ամրանալ Հռոմի հետագա որդանական հակակշիռը։

Ասիայի ներսում ստեղծվում է մի նոր մեծ պետություն — պարթևական թագավորությունը։ Պարթևական պետության անսովոր արագ զարգացումը մեծ դեր խաղաց համաշխարհային պատմության մեջ։ Պարթևները իրապես Արևելքի պատվարը հանդիսացան արևմուտքի հանդեպ ի դեմս հռոմեացիների։

Միաժամանակ Պոնտական Միհրդատ թագավորը չանտալով ստեղծել Հռոմին հակակշիռ։ Սև ծովյան հուժկու պետություն, հռոմեացոց դեմ իր կռիվը վարեց այնքան վարպետորեն և հաջող, որ շատ անգամ ցնցեց Հռոմի արտաքին քաղաքականության շենքը։

Պարթևական թագավորական հարստության հիմնադիր Արշակի հաջորդները մեծ զարգացում ու նշանակություն ստացան՝ իրենց ճյուղավորումը տարածելով ամբողջ Անդր-Յեփրատյան Ասիայի վրա, ինչպես նաև Կովկասի և հարավ Բուսիալի տափաստանների վրա։ Արշակունիները հետագայում չորս ճյուղի բաժանվեցին, որոնցից յերկրորդ տեղը պատկանում եր հայոց թագավորին (I դարի յերկրորդ կեսից, մեր թվ.)։ Հայոց պատմության մեջ Արշակունիների շրջանը հասնում է մինչև 428 թվականը, այդ գինաստի առաջին թագավորն է Տրդատ Ա. նրա թագավորությունն սկսվում է փաստորեն 52 թվից մեր թվ., իսկ պաշտոնապես նա ճանաչվել է Հռոմի կողմից ի դեմս Ներոն կայսեր՝ 66 թվին։ Հայաստանի Արշակունիների հարստությունն ապրեց պարթևական թագավորության անկումը։

Յեթե մանրամասնորեն կանգ չեմ առնելու նրանց փաստական պատմության վրա, այլ կհիշատակեմ միայն այդ շրջանին վերաբերող մի քանի կարևորագույն միջադեպեր, որոնք կապված են Հռոմի հետ։

133 թվ. մեր թվականից առաջ Պերգամի թագավոր Աատալ III Ֆիլոմետորը մեռնելուց առաջ հռոմեացոց կտակեց իր թագավորությունը, որով և փաստորեն սկսվեց փոքրասիական մեծ և փոքր պետությունների զրավումը հռոմեացիների կողմից։ Այս ժամանակից ետա սկսվում է Հայաստանի շփումը Հռոմի հետ։ Գլխավոր ընդհարումները Հռոմի հետ ունեցավ Պոնտական Միհրդատը իր փեսայի, հայոց թագավոր Տիգրան Մեծի զաշնակցությամբ։ Միհրդատի առաջին ընդհարումը հռոմեական փոխարքա Սուլլայի հետ սկսվեց Հունաստանում և տևա փոխադրվեց Փոքր Ասիա։ Հետագայում, Փոքր Ասիայից զիկատորը Սուլլայի հեռանալուց հետո, հռոմեական զորքերի զեկավարությունն ստանձնում է կոնսուլ Լուկուլլոսը։

Այդ ժամանակից սկսվում է կատաղի կռիվ Լուկուլլոսի և Միհրդատի միջև, որ վերջանում է Միհրդատի պարտությամբ 73 թվին։ Հաջորդ տարիներում Լուկուլլոսը ամբողջացնում է Պոնտական թագավորության նվաճումը։ Միհրդատը ապաստան է գտնում Հայաստանում Տիգրանի մոտ։ Լուկուլլոսը պահանջում է իրեն հանձնել Միհրդատին, Տիգրանը մերժում է։ Շուտով բախումը դավճանում է Լուկուլլոսին, Միհրդատը և

* Մ. Խորենացի Պատմ. Բ. 90 «Կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ է տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի գրոշուածովք, բարձր քանդակաւ ի համար քեռ իւրոյ Խոսրովիդեանոյ, և գրեալ ի նմա գրչատակ իւր հելլենացի գրով»։

Տիգրանը նորից հաղթող են հանդիսանում և Միհրդատը վերականգնում է իր թագավորությունը։

Լուկուլլոսի սկսած արշավանքը յերեք տարի հետո ավարտվեց Պոմպեյի կողմից, վոր կործանեց Միհրդատի զորքերը։ (Յեն. Ֆլոր. III—6)։

65 թվին Պոմպեյը նորից սկսեց հետապնդել Միհրդատին, վերջինս իր զորքերով Հայաստանում ձմեռեց, բայց պարտվեց և փախավ, իսկ Տիգրանին Պոմպեյը դարձրեց իրեն դաշնակից։

Հետագայում (37 թ. մեր թվ.) հռոմեացիք վերսկսում են իրենց արշավանքները պարթեվների վրա և Արտավազդը, հայոց թագավորը, Տիգրան Մեծի վորդին՝ մասնակցում է այդ պատերազմներին իբրև հռոմեացոց դաշնակից։

Այսպիսով Հռոմի գերիշխանությունը փոքր Ասիայում, վոր տեվեց շատ տասնյակ տարիներ, անդրադարձավ և արվեստի վրա թե փոքր ասիական և թե հատկապես Հայաստանի։

Մեզ հետաքրքրող ժամանակը—Տրդատ Ա. 66 թ.—հենց այն շրջանն է, յերբ Հայաստանը կախումն ուներ Հռոմից և հայոց թագավորներն իրենց հաստատումը դանում եյին Հռոմի կողմից։

Պատմական անցքերի խմբումը դարձնում է հավանական հռոմեական արվեստի տիրապետող ազդեցությունը Հայաստանի վրա։ Տրդատ Ա., վոր յեկավ Հռոմում, բերում է իր հետ այնտեղից շինարարության համար քարգործ վարպետներ։

Մեջ բերված համառոտ պատմական տվյալները միանգամայն պարզում են այն սերտ կապն ու կախումը, վոր Հայաստանն ուներ Հռոմից, ուստի դառնում է հասկանալի մեզ մոտ հռոմեական արվեստի և ազդեցությունը և հանդես գալն իր անաղարտ ձևով։

Հուշարձանի նկարագրությունը, վորին և մենք այժմ անցնում ենք, մեզ հնարավորություն է տալիս բավականաչափ պարզ կերպով տեսնելու Հռոմի ամբողջ ազդեցությունը իր ուժեղ արտահայտությամբ տաճարի թե կառույցվածքի և թե մանրամասնությունների մեջ։

Հռոմեական ճարտարապետության վաղագույն արտահայտություններում, հանրապետության շրջանում—հաճախ գործադրվում եր հունական վոճը։ Հռոմեացիք վերցրին հույներից նրանց ճարտարապետական վոճի գլխավոր ելեմենտները — սյունը և արխիտրավը և միայն հետագայում նրանց ավելացրին թաղը և գմբեթը։

Հռոմայեցիք իրենց տաճարները կառուցելիս ինկատի եյին առնում գլխավորապես արտաքին եֆեկտը, և վորպեսզի շենքի արտաքինը համապատասխանի նրա կոչումին, վորպես սրբավայրի, շինված հանուն այս կամ այն աստվածության՝ նրան դարդարում եյին ընտիր քանդակագործությամբ։ Յուրահատուկ պատկեր ուներ այսպես կոչված գաղութային ճարտարապետությունը հռոմեական կայսրության շրջանում։ Այստեղ հունա-հռոմեական վոճը յուրորինակ ներդաշնակությամբ միացվում է ասիականի հետ, մասնավորապես իրանական ազդեցությամբ, վորը Պարսկաստանից փոխանցվում եր այնտեղ Կովկասի—փոքր ասիական նավահանգիստների միջոցով։

Ըստ հորինվածքի—մենք խնդրի ճիշտ միյնվնույն լուծումն ենք տեսնում նաև Գառնիում։

Թեկուզ Գառնիի տաճարից բուն տեղում պահպանվել են միայն պոդիումը, յերկու սյունի պատվանդաններ և պատի մի փոքրիկ կտոր հյուսիս արևմտյան մասից, ընդամենը մեկ մետր բարձրությամբ (պատկ. 3, 14, 75)՝ այնուամենայնիվ, այն ինչ վոր կա պահպանված, հնարավորություն և տալիս վերականգնելու իր մանրամասնություններով տաճարի տիպը և դետալներն ամբողջությամբ։

Հուշարձանի թռուցիկ զննումը առաջին հայացքից, պետք է ասել, թողնում է վոչ շատ նպաստավոր տպավորություն, բայց թռուցիկ ակնարկը բավական չէ, վորպեսզի նա ըստ արժանվույն գնահատվի։ Իրար վրա թափված և միատեղ խմբված քարի կտորները մի պահ կարծել են տալիս, վոր այդ շփոթից բան չի դուրս գալու, բայց ձեռնամուխ լինելով հուշարձանի լուրջ հետազոտման, և մանրազննին ուսումնասիրելով նրա յուրաքանչյուր մասը ու պարզելով յուրաքանչյուր բեկորի նշանակությունը, չափագրումների և գծագրումների ոգնությամբ վերականգնելով նրանց ամեն մեկն իր նախկին տեղում, ստացվում է միանգամայն պարզ տպավորություն տաճարի կառուցվածքի և մանրամասնությունների մասին։ Այնուամենայնիվ ընդհանուր վերակազմության համար անհրաժեշտ և հաղթահարել մեծ դժվարություններ, քանի վոր տաճարն իրանից ներկայացնում է իր յերկու առանցքով միանգամայն սիմետրիկ կոմպոզիցիա, և ահա, ինչպես կատարել ընկած միանման բեկորների տեղավորումը. այստեղ արդեն մնում եր դեկավարվել, գլխավորապես, քարի այս կամ այն կտորի ընկած տեղով ու դիրքով։

Ծանոթանանք տաճարի հետ նախ այն տեսքով, վոր պահվել է մինչև այժմ, և ապա աշխատենք կենդանացնել ավերակները վերակազմության գծագիրներով, վորպես նըշված եսքիզային կատարյալ ստեղծագործություն։

Ամբողջ տաճարը բարձրանում է «Ստիլոբատ»-ի վրա՝ կազմված յերկու աստիճանավորումից, վորի վրա տեղավորված է «պոդիումը»։ Հույները գործադրում եյին նման բարձրագիր ձևը, վորպեսզի տաճարը վերամբարձ լինի սովորական ունայն աշխարհից, դրանով ուզելով տալ տաճարին վեհություն և հանդիսավորություն։

Տաճարը մուտք ունի միայն հյուսիսային, յերեսի կողմից, վորտեղ շինված են մուտքի աստիճանները ճակատի ամբողջ լայնությամբ, (պատկ. 67, 68, 69) ներփակված կողքերից յերկու փոքրիկ պատերի մեջ, վորոնք պոդիումի կամ տաճարի յոկոլների շարունակությունն են կազմում և անշուշտ ծառայել են իբրև պատվանդաններ զոհարանների համար։ Այս դուրս ցցված մասերի վրա, նրանց յերեսի կողմից, կան բարելիեֆներ—յերիտասարդների պատկերով, վորոնք ձեռքով պահած ունին յոկոլի կարնիզը, հավանաբար, նաև զոհասեղանը (պատկ. 18, 19, 70)։ Հռոմեացոց մոտ ամբողջ շենքը շրջապատող կոլոննադի և անընդհատ աստիճանավոր ստիլոբատի բացակայությունը՝ վորոշ չափով զրկում է տաճարներն այն ամբողջությունից, վոր մենք տեսնում ենք հունական տաճարներում։ Վերջիններս կանգնած եյին բոլորովին առանձնացած և տեսանելի եյին բոլոր կողմերից. մինչդեռ հռոմեական տաճարները նայվում եյին գլխավորապես ֆորումի կամ հրապարակի կողմից, ուր նրանք դուրս եյին գալիս իրենց արտաքին ճակատով։ Այս տեսակետից մեր հուշարձանը մոտենում է հունական ձևերին։

Տաճարն ըստ պլանի կազմված է՝ «Նաոս»-ից կամ «Ցելլա»-ից (կենտրոնական մաս, խորան), վորի մեջ կանգնում եյին աստծու կամ աստվածուհու արձանը, և մուտքի կողմից բավականին խոր «պրոնաոս»-ից (գավիթ) անտերով։

Ընդհանուր պլանի համաչափությունը, այսինքն յերկարությունը լայնության հարաբերական համեմատությամբ մի քիչ ավելի կարճացրած, մոտեցնում է հռոմեական համաչափության (պատկ. 2)։ Հույները տաճարի յերկարությունն անում եյին լայնության կրկնակին։

Գառնիի տաճարն իր տեղադրությամբ մի քիչ առանձնացած է ինչպես յեն պալատական շենքերի խմբից և գեղարվեստորեն տեղավորված է խոր ձորի գլխին մոտ և յերևում է բոլոր կողմերից (պատկ. 1)։

Տաճարը շրջապատված է ուժեղ կոլոննադայով – սյունաշարքով, վոր պահում է տաճարի ծածկը շքեղ ու հոյակապ ֆրոնտոններով — առաջին և յետին ճակատների վրա, հյուսիսային և հարավային կողմերից. ծայրերի (տորցերի) ֆասադներից յուրաքանչյուրն ունի վեցական սյուն։

Տաճարն իր պլանի ընդլայնով կարելի է վերագրել հունական այսպես կոչված «հեկատոմպեդան (հարյուրվոցյան) պերիպտեր»-ների տիպին, այսինքն տաճար, վոր բոլոր կողմերից շրջապատված է սյունաշարքով և ունի պորտիք 6-ական սյուներով՝ ծայրի (տորցերի) ֆասադներից յուրաքանչյուրում։ Պորտիքը ծածկված է յեղել յերկթեք տանիքով։ Ֆրոնտոնների տիմպանները քանդակագործություն չունեն, այլ ներկայացնում են հարթ մակարդակ խնամքով մշակված յերեսի քարերով։ Տանիքն, անկասկած, յեղել է փայտից, ինչպես այդ գործադրվում եր այն ժամանակ, իսկ ծածկը կղմինտրից։

Տաճարի մեջ պատուհաններ չկան, լույսն անշուշտ, թափանցում եր տանիքում հատկապես թողնված անցքից, ինչպես այն սովորաբար ընդունված է վաղ հռոմեական տաճարներում։

Կոլոննադների առաստաղները ծածկված են սալանման քարերով, մշակված հարուստ կեսոններով, այսինքն խորաքանդակ հատածներով։

Կեսոնների ձևերը ներկայացնում են հարուստաբազմատեսակություն պրոֆիլների լավ մշակությամբ և քանդակաղարդ են (պատկ. 46, 51, 129, 152)։ Պատերի շարվածքը կազմված է կանոնավոր տաշված մեծ քարերից, չոր (առանց շաղախի) դրված յերկուական քարեր կազմում են պատի հաստությունը՝

միացած իրար յերկաթե կապերով։ Այսպիսի շարվածքը շատ ընդարձակ և հանրապետության ժամանակի հռոմեական ճարտարապետության համար։

Քարերի շարքի բարձրությունը միանման է և հավասար 0,44 մ. (պատկ. 21), քարերն իրենց յերկարությամբ մի քիչ տարբերվում են իրարից, միջին չափը կազմում են 1,02—1,05 մետր։ Տաճարի հիմքը (ֆունդամենտ) բարձրացրած է բետոնով՝ կազմված բազալտի խիճից և մի հինգերորդ քարի մանր կտորտանքներից՝ միացրած ամրողջն իրար շաղախով, որի մեջ մտնում են — կիր և ամենայն հավանականությամբ, պեմզա։ Բետոնը լայն կերպով գործադրվում էր հռոմեացիների կողմից սկսած I դարից նախ քան թ. գերազանցապես հիմքերի վրա՝ առանց յերեսաքարերի։ Որդերի մյուս մասերը, ինչպես արխիտրավ, ֆրիզ և կարնիզ՝ կազմված են առանձին շարքերից, իսկ յուրաքանչյուր շարքը—մի կտորից։ Միացման մակարդակները ուղղահայաց դիրք ունեն և տեղ տեղ խրված քարեր՝ խուսափելու համար հորիզոնական սահումից։ Հաստության մեջ առանձին մասեր շինված են միակտուր քարերից։

Առանձին քարերի կապումն իրար, բացի խնամքով ընդհուպ դրվածքից՝ միացած են նաև մետաղե կապերով կամ բեռնոներով։ Քարերի առանձին կտորները, մանավանդ նրանցից մի քանիսը, բավականին ապշուն չափերի են հասնում, որինակ, պորտիքի ծածկի սալանման քարերը կամ ֆրոնտոնների անկյունաքարերը։ Նրանցից խոշորագույնի հյուս. (ֆասադի պորտիքի առաստաղի սալաքարը) քաշը ըստ հաշվի՝ հավասար է 4812 կիլոգրամի (կամ 300 փութի)։ Ինչպես ելին բարձրացնում կամ տեղաշարժում քարի այդպիսի կտորներն այն ժամանակներում, յերբ չունեին վերահանման կատարելագործված մեքենայական հարմարություններ՝ ուսամ և արխիտրավի և այլ քարերի վերհանումը համապատասխան բարձրության և նրանց կանոնավոր տեղավորումը իրանց տեղերում անշուշտ մի քիչ դժվարություն չեր ներկայացնում այն ժամանակվա կառուցողների համար։ Քարերի տեղափոխումն ու վերհանումը, պեմք է յենթադրել, կատարվում էր նրանց կողմից հին յեգիպտական յեղանակով, այն է՝ — սյունամեջ ամբողջ տարածությունը լցվում — փակվում էր պարկերով լիք ավազով, որոնք իրար վրա դասավելով բարձրության ելին կազմում։ Քարերը քաշում հանում ելին այդ բարձրության գլուխը և դնում ճիշտ այն տեղի վերևում, որ նա պեմք է գրավեր շարվածքի մեջ. դրանից հետո համապատասխան պարկերը պատռվում ելին, ավազը սկսում եր դուրս թափվել և քարը զանգաղորեն յածրանալով բռնում եր իր տեղը։

Տաճարի որդերը հոնիական և Հռոմայեցոց տաճարներում այդ որդերը գործադրվում եր հաղվագյուտ դեպքերում և բացառապես ատամաձևիներին նվիրված տաճարներում։

Զոկելով առանձին քարեր սյունի ֆուստի (ընի, ձողի) մասերից, որոնց բեկորները մեծ քանակությամբ կան թափված հուշարձանի շուրջը, հաջողվեց ստանալ համապատասխան չափեր և վերականգնել բուն ամբողջովին (պատկ. 22, 77), որի բարձրությունը հավասար է 5,80 մետրի, ներքին տրամագիծը—0,65 մետր, այսպիսով ամբողջ սյունի հարաբերական բարձրությունը 9 անգամ ավելի յեր իր ներքին տրամագծից։ Սյունի բունը ակոսավոր չե. նա կազմված է չորս առանձին քարերի կտորներից. ընի նեղացումը դեպի վեր հավասար է ներքին դիամետրի մոտավորապես $^1/_6$-ին։

Միջնասյուների խոյակները, ինչպես տաճարինն, նույնպես և յեռին ճակատների վրա, ներկայացնում են զույգ վալյուտներ (պատկ. 24, 25, 78—84) (վոլոթվածք կամ սպիրալ). այդ յերկու զույգ վալյուտները խոյակի կողքերում միանում են իրար հետ այսպես կոչված «բարձիկներով», որոնք հարուստ զարդաքանդակված են։ Միջանկյալ խոյակների բարձիկները զարդարված են տերևներով, անկյունախոյակները ունեն ականթի տերևներ և այլ զարդաքանդակներ։ Վալյուտների միջին ձողի պարանոցը ունի ողակ, որ կազմված է իոնիկներով զարդարված քառապլանակից և հուլունքաշարից։ Վալյուտների սպիրալի տառեին շրջագծից դուրս և դալիս արմավատերև (պալմետակա) և կիսով չափ ծածկում է պարանոցի ողակի զարդարանքները։ Սպիրալների (վալյուտի) շրջագիծը ունի ազատ ու գեղեցիկ ծռություն հունական ամենալավ վալյուտների նմանությամբ, քանի որ հռոմեական վարպետները գերադասում ելին վալյուտան նկարել կարկինի ոգնությամբ կամ յեկրաչափական պարզ յեղանակով։ Սպիրալների միջնակոսի (canalis) հատվածը, հունական խոյակների նմանությամբ, ունի սահուն կերպով բոլորված մակարդակներ. հռոմեական որինակներում սպիրալի պրոֆիլին անցնելը հաճախ կատարված է անկյունավոր։ Վալյուտի առանձին անցքերը չեն գտնվում մի մակարդակի վրա, իսկ սպիրալները, որքան մոտենում են վալյուտի կենտրոնին, դառնում են վինտանման։ Վալյուտի աչքը (oculis) փոքր չափի է և գտնվում է իոնիկի ատարաղաչի բարձրության վրա։ Աչքերի միջին տարածությունը հավասարվում է սյունի վերին մասի տրամագծի չափին։

Անկյունատյուների խոյակները (պատկ. 26, 85) փոքր ինչ տարբերվում են միջնասյուների խոյակներից։ Այստեղ խոյակներն ունեն վալյուտների թեք դասավորություն, յերեք անկյունների յերկու հարևան անկյունավալյուտները ձգվում են խոյակի թեքության ուղղությամբ և վալյուտների միացման ընդարձակ դաշտը հարուստ քանդակազարդված է վոլոթվածքով և տերևներով. չորրորդ անկյունն ստացվում է մի կորը-վածքով, որը բաժանում է խաչաձևող վալյուտները կողքերի բարձիկներից։ Տվյալ ժամանակաշրջանում վալյուտների այսպիսի դասավորությունն ավելի հաղվագեպ եր, քան խոյակների նորմալ տիպը։

Արակը (սյունի գլխի սալը) ունի ներս ընկած կողմեր, կտրված անկյուններ, պրոֆիլը մնում է նույնը։

Տաճարի անտերը մշակված են անկյունապիլաստրների (վորմասյուների) տեսքով (պատկ. 12, 26—28, 87—90)։ Այդ պիլաստրները նույնպիսի կտորներով են կազմված, ինչպես և համապատասխանող սյուները։ Նրանց բունները հարթ են, կազմված են առանձին քարերից, որոնք միացած են պատերի շարվածքի և միանման շարքերի հետ։ Խոյակները թեք տիպի են։ Պիլաստրների խոյակների մեջ իոնիկները, ինչպես և սյուների վրա՝ ունեն վոչ թե կլորացած թերթիկների նմանություն, այլ ձվի ձև, որոնք ուժեղ մշակված են և առանձնացրած շրջանակի յեզերքներից։ Վորմասյունային խոյակների իոնիկների շարունակությունը, բոլոր պրոֆիլներով հանդերձ, ձգվում է պորտիքի ամբողջ պատի շուրջը (պատկ. 92)։

Խարիսխն աչքի չե ընկնում գեղեցիկ և ճաշակավոր պրոֆիլով (պատկ. 23, 29, 86), թեկուզ և նա չի պարունակում շատ մանր մասեր, որոնք խորթ են հասարակ որդերներին։ Նրան կարելի չե նմանեցնել, այսպես կոչված «Ատտիկյան» բազաներին։ Ինչպես ամեն մի բազա, նա ևս ունի ներքևում պլինտա, իսկ պլինտից վերև մի վալիկի փոխարեն, նա ունի յերկուսը՝ բաժանված իրարից խոր ակոսով, յերկու վալերից. ներքևինն ավելի հաստ է, որ միանգամայն արամաբանական է։

Հռոմեա-հոնիական որդերի անտարլիմենտը (պատկ. 11) կտորների դասավորության փոքրասյական սխեմայով՝ մոտենում է, ըստ իր մասերի, հունական ալեքսանդրյան եպոխայի որինակներին։

Արխիտրավը (պատկ. 30, 31, 91, 93, 94) բաժանվում է յերեք շերտի, որոնց բարձրությունը վերևում հետզհետե ավելանում է։ Վերին տափակ շերտը վերջանում է փորված կրունկիկով, ներքևում ձգվում է հուլունքի շղթան և նեղ դարակիկը։ Պրոֆիլների առատությունը վերին տափակ շերտում մի քիչ ծանրացնում է նրան հռոմեական սովորական որդերների համեմատությամբ։ Մնացած մասում բաժանող շերտերն ունեն տարբեր մուլյուրներ — հուլունքներ և ծալված հուս, վերջին զարդարանքը հռոմեական ճարտարապետության մեջ շատ հազվադեպ է։ Արխիտրավի բարձրությունը մի քիչ փոքր է ընի ներքին տրամագծից, իսկ լայնությունը հավասար է նրա վերին տրամագծին։

Արխիտրավի ներքին մակարդակը, սյունամեջ ամբողջ տարածությամբ, զարդարված է խորացրած կտրվածքով, որը ծածկված է բուսական քանդակի թեթև փորագրությամբ՝ (պատկ. 39 — 41, 104 — 113) հարուստ իր բազմատեսակությամբ (մինչև 15—18 նկարներով) սա հակադրվում է հետագա եպոխային, որը ընորոշվում է մոտիվների ծանրությամբ։

Ֆրիզը տրտաքուստ ծածկված է հարուստ ռելիեֆ քանդակով (պատկ. 32, 95 — 98)։ Քանդակի հյուսվածքների սկզբնակետը գտնվում է անտարլեմենտի անկյուններում։ Քանդակի սիմետրիկ ալիքները հանդիպում են ֆրիզի միջին մասում յերկու շաղկապված հյուսվածքների ձևով։ Ֆրիզի քանդակի այսպիսի կոմպոզիցիան համարվում է լավագույնը և վերաբերում է Ոգոստոսի ժամանակաշրջանին։ Հյուսվածքների ավելի ուշ ժամանակի որինակները տուժում են ականթի մոտիվների կուտակումից, որ ամբողջովին ծածկում են ֆրիզի ֆոնը։ Ֆրիզի ֆոնը ունի կորացած պրոֆիլ — S տառի ձևով. նման դեպքեր հռոմեական ճարտա-

բապետության հոնիական որդերում համարվում են բացառություն և գործադրվում եյին մանավանդ արևելյան շրջաններում։ Ծուռ (թեք) ֆրիզները Կորինֆյան որդերի առանձնահատկությունն են կազմում (որինակ Դիոկլետիանոսի լողարանը)։ Ֆրիզն իր բարձրությամբ մի քիչ ցածր է արխիտրավից և կազմում է վերջինիս բարձրության համարյա $^1/_2$-ը։

Արխիտրավի և ֆրիզի միջանի պրոֆիլների ուղղահայաց մակարդակները փոքրիկ թեքություններ ունեն դեպի առաջ, յուրաքանչյուր մասի բարձրության $^1/_7$-ի չափով։ Այս պահանջն ի կատար է ածված անշուշտ զեկավարվելով տեսողական նպատակներով։ Ըստ Վիտրուվիի հոնիական անտաբլեմենտի բոլոր ուղղահայաց մասերի թեքությունը դեպի առաջ՝ հավասարվում են տվյալ մասի բարձրության $^1/_{12}$-ին։

Կարնիզը, համաձայն Ասիա-հոնիական սխեմայի, ատաճարավոր է՝ յերկու շարք մոդուլյոնների միջև (պատկ. 33, 99, 101—103)։ Կարնիզի դուրս հանված մասը — յելունդը մոտավորապես հավասար է նրա բարձրության $^2/_3$-ին։ Դուրս հանված սալի տակ գործադրված է կրունկիկի կոր։ Ատամի (սուխարիկի) բարձրությունը հավասար է նրա լայնության և յելունդին, իսկ ատամների միջև տարածությունը հավասար է ատամի լայնության համարյա կեսին։ Մեջ բերված մասերի հարաբերական չափերը չեն համապատասխանում Վիտրուվիին։ Ըստ նրա պահանջների՝ ատամի բարձրությունը պետք է յերկու անգամ ավելի լինի նրա լայնությունից, և ատամների միջև տարածությունը հավասար նրանց լայնության $^2/_3$-ին։ Ատամների անկյունային հաշվումը լուծված է ուղիղ, ինչպես լավագույն հռոմեական կարնիզներում, նմանապես և հունական որինակներում — անկյունում տեղավորված են յերկու իրար փոխադարձ ուղղահայաց ատամներ. յերկու խաչաձևող ատամներով կազմված ազատ անկյունը, հունականի նմանությամբ, լցրած է միևնույն քարի..... ուռուցքով։

Ֆրոնտոնի թեք կարնիզի մեջ ատամները (պատկ. 34—37, 101, 114, 115) կախված դրության մեջ են։ Հորիզոնական կարնիզի բոլոր մասերը կրկնվում են ֆրոնտոնի թեք կարնիզներում։ Կարնիզի վերնամասը (պսակը) ունի ուժեղ դուրս ցցված սագիկի (sima) ձև և պորտիքի ֆասադների ամբողջ յերկարությամբ դուրս թափող բերանններ, վորոնք արտաքուստ զարդարված են բերանները բացված առյուծի գլուխներով։ Առյուծի գլուխներն ընդհանրապես եպոխայի համար շատ բնորոշ են, վորոնք հարմարեցվում եյին անձրևի ջրի հոսանքի համար, սակայն այս դեպքում այդ գլուխները զուտ զեկորատիվ դեր են խաղում, քանի վոր առյուծի բերանում անցք չի շինված։ Առյուծի գլուխները դասավորված են տաճարի կողքի ֆասադներում համաչափ հեռավորությամբ սյուների գլխին և միջնամասերում։

Ֆրոնտոնի գագաթի կամ կատարի պահպանված մասերի վրա (պատկ. 116, 117, 118, 121), ինչպես նաև նրա հիմքի անկյուններում — պարզ յերևում են ակրոտերները (տանիքի զարդարանք) ամրացնելու տեղերը, թե կատարինը և թե անկյունները։ Ինը հորիզոնական հարթություններ ձևով, համապատասխան փորվածքներով։

Հռոմեա-հոնիական որդերների ընտիր որինակներ, դժբախտաբար քիչ են պահվել, վորպեսզի կարելի լինի ստուգել նրանց հարաբերական տարբերություններն ու շեղումները. սակայն հռոմեա-կորընթական որդերի մեջ հայտնի անտաբլեմենտները, վորոնք շինված են Ասիա-հոնիական սխեմայի համաձայն՝ մեջ հանդիսանում են մոտիվների բազմատեսակության մեջ, գործադրվող հռոմեացի ճարտարապետների կողմից, և այն ազատության, վոր նրանք թույլ եյին տալիս։

Մուտքի դուռը, ինչպես յերևում է, աչքի ընկնող դեր է խաղացել ֆասադի վրա, ուստի և նա հարուստ ճարտարապետական մշակման և յենթարկված (պատկ. 10, 42)։ Բացվածքը կապված է վերևից միակտուր քարե բարավորով, վոր վերջանում է հարուստ սանդրիկով (պատկ. 44, 124, 127, 128) (մուտքի վերևի զարդ) — քանդակազարդ ֆրիզով (պատկ. 125, 126) և կարնիզով։ Կարնիզը կանգնած է կողքերի կրոնշտեյնների (ուսերի) վրա։ Բացվածքն ամբողջությամբ դրված է հարուստ քանդակազարդված լայն շրջանակի մեջ, պրոֆիլը ալեզնյակի, սագիկի և այլն տեսք ունի (պատկ. 43, 45, 122, 123)։ Շրջանակը մուտքի յուրաքանչյուր կողմում կազմված է յերկուական քարից, վոր պահվել են ամբողջությամբ։ Պահված է նաև բարավորը։

Վատ և պահպանվել միայն մուտքի սանդրիկը, բայց և այնպես հաջողվեց գտնել ամբողջ դրությամբ նրա անկյունը, վորի վրա ճնցել է կրոնշտեյնը հագցնելու տեղը (պատկ. 128)։

Կրոնշտեյնը մեծ չափի չի լինում. այդ քարն, ինչպես յերևում է, հեռացված է տեղից։ Այսպիսով մուտքի դուռն ամբողջովին վերականգնվում է, բացառությամբ յերկու կրոնշտեյնների, վորոնց ունեցած ձևը պարզելը դժվար չէ, ունենալով նրանց չափերը և գիտենալով նրանց գործադրումը հռոմեացիների կողմից այդ ժամանակաշրջանում, մանավանդ վոր կրոնշտեյնի տիպերն այնքան էլ բազմազան չեն։

Զարմանք են պատճառում պորտիքի ծածկի սալանման քարերն իրենց խոշորությամբ և մի ճաքուլությամբ, վորոնց յերկարությունը մոտ չորս մետրի յի հասնում։ Այդ քարերից պահպանվել են բավականին քանակությամբ թե ամբողջ վիճակում և թե կտորներով՝ քանդակազարդված բազմատեսակ մոտիվներով (պատկ. 129—152)։ Այդ սալաքարերի վրա փորված են կոմպոզիցիաներ, վորոնք պատկերում են հունական սիստեմի մոնումենտալ ծածկը քարե գերաններով և խորաքանդակ սալերով։ Բաժան-բաժան արված խմբավորումների միջև տեղավորված են ազատ կոմբինացիաներ՝ քառանկյունի, ռոմբաձև և բազմանկյուն կասետների ձևերից, վորոնց արանքները նշանակված են տարբեր խոնիկաներով։ հատակի միջուկը (կենտրոնը) զարդարում է մի խոշոր, քիչ կամ ընկած ռոզետկա։

Դուրս և ներս ընկած ճարտարապետական բեկորները ոգտագործվել են ճարտարապետի կողմից ֆասադի վրա գծեր անցկացնելու համար։ Վորպեսզի հասկանալի լինի այն եֆֆեկտը, վորին կարելի յե հասնել այդ կտորներին տալով այս կամ այն ուրվագծումը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց բնական դիրքում — տեղի վրա։

Մեր հուշարձանի մեջ այդ ճարտարապետական բեկորների շինությունը կատարված է մեծ ընտրությամբ և նրբությամբ։ Նրանց կազմության վրա ազդել են մասամբ նաև նյութի — ամուր բազալտի — հատկությունները։ Նրանք հավանաբար գծված են ձեռքով և չեն յենթարկված ընդհանրացած յերկրաչափական հորինվածքներին։ Արժանի յե ուշադրության, վոր զարդաքանդակի գծերը միշտ համաձայնեցված են ճարտ. բեկորների ուրվագծի հետ։ Ասել է թե, զարդաքանդակը վոչ միայն հարստացնում է ճարտ. բեկորները այլ և ընդգծում է նրա ձևը։

Ճարտ. բեկորները ծածկող զարդաքանդակները կատարված են խնամքով և մեծ վարպետությամբ։ Մեր պինդ, մանրահատիկ բազալտը, վորից շինված է տաճարն ամբողջովին, տալիս է մեծ նրբություն և գեղեցիկ մանրամասնություններ մշակելու հնարավորությունը, իսկ սքանչելի քանդակագործությունն ու փորագրությունը ամբողջացնում են տաճարի գեղարվեստական ձևավորումը։ Պրոֆիլների տարբերի բոլոր զարդարանքները կազմված են հարևան շերտի միատեսակ, համաչափ կրկնվող մոտիվներից։ Զարդաքանդակների գերակշռող մոտիվը, ինչպես և վաղ հռոմեական շրջանում, ականթի տերևի գործադրումն է. այստեղ զուտ հռոմեական ականթն է, այսինքն ականթի տերևներն ու վոլորվածքները լայն և բութ ծաղկաթերթերով, հատվածում փոքր ինչ ներս ընկած — այդ այսպես կոչված, բութ կամ նուրբ ականթն է, տարբեր հունականից, վորը սուր կամ փշանման ականթ է։

Հատկապես նշանավոր են այն զարդաբանքները, վորոնք յերկարավուն մարգարտաշարի տեսք ունեն և իրար հետևելով կրկնակի շրջան են գործում, կամ այն սլաքավոր խոնիկները, վորոնք տեղավորված են արանքներում։

Մենք տեսանք արդեն, վոր տաճարի ճարտարապետությունը, անկասկածելորեն իր մեջ արտացոլում է հունահռոմեական տաճարների տեսքը և տաճարի կառուցողը, անշուշտ, գտնվել է հույն վարպետների (այդ ժամանակվա հռոմեական շենքերի կառուցողների) ուժեղ ազդեցության տակ, կամ թե կառուցողն ինքը բերված է Հռոմից։ Այս հաստատվում է գուցե և այն հունարեն գրերի ներկայությամբ, վորոնք իբրև վարպետի նշաններ գտնվում են շենքի քարերի վրա λεφ ձևով, միորինակ կրկնված ճարտարապետական ամենապատասխանատու մասերում, վոր թերևս կառուցողի անունը լինի։ Ι-ին դարու մեծ վարպետի ձեռքի ուրվանկարն ենք տեսնում հուշարձանի թե կոմպոզիցիայի և թե մանրամասնությունների վրա։ Իսկ յեթե զարդաքանդակի ձևերի մեջ կա շատ պրովինցիալիզմ, շեղումներ և ազատ կոմպոզիցիա — այդ կարելի յե բացատրել նրանով, վոր հռոմեացիք հպատակեցնելով իրենց արևմուտքի և արևելքի շրջանները,

մացրին այնտեղ իրենց կառուցողական ձևերը: Վոչ ամենուրեք սակայն, և վոչ միևնույն չափով, նրանք հանդիսացան կլասիք ճարտարապետական ձևերի առաքյալներ. անկասկած, և վոր լեղել և նաև հարևան յերկրների ազդեցությունը: Վերջիններիս դեկորատիվ մանրամասնությունները հաճախ մի փոքր այլ բնույթ ունեցին քան Հռոմի հուշարձաններում, վորտեղ հին կլասիք արվեստի տարբեր ուղղությունների ազդեցությունները բաղխվում եյին իրար, վերամշակման յենթարկվում և արագորեն փոխանակվում:

Կայսրության արևելյան շրջանների ճարտարապետությունը մնալով հունական եպոխայի փայլուն որինակների ազդեցության տակ և յենթարկվելով հետագայի տեղական բնույթի արվեստի վորոշ ազդեցությանը — կորցրեց իր ապագա զարգացման լայնությունը և ինքնուրույն բնույթագրումն անգամ Հռոմում I և II դարերում (մեր թվ.) վերամշակված կանոնների մեջ:

Պալատի տերիտորիան, ինչպես յես ցույց եմ տվել վերևում, պատված է յեռանկյունաձև հրապարակի մի կողմից ամբոցի պարբսպով, վորից պահվել է շատ փոքր մասը միայն, ամբոցի միակ մուտքի շուրջը: Պահպանված դուռը և պատերը ցույց են տալիս, վոր այստեղ կառարված են բազմաթիվ նորոգումներ, սակայն թե պատերի և թե մուտքի հիմքը, ներքին — ցոկոլի մասն անպայման պատկանում է պալատի և տաճարի ժամանակին, բայց կարող է լինել և ավելի հին նրանց ժամանակից, ինչպես այդ մասին վկայում են թե շինության նյութը — քարի տեսակը և թե քարերի ձևն ու նրանց շարվածքը (պատկ. 52—55, 61, 153, 154)

Մուտքի դռան վերին մասը շարված է տուֆ քարից և ըստ իր ճարտարապետության կարող է լինել X—XI դ. մեր թվ.:

Հայ արվեստի ուսումնասիրության համար, բոլոր ժամանակաշրջանների վերաբերմամբ, Գառնին իր շրջակայքով ճարտարապետական անալիզի համար ներկայացնում է հրաշալի որինակ. Ամենուրեք, ուր վոտք ես դնում, հանդիպում ես պատմական հիշատակարանի: Գառնիի պատմական անցյալը կապվում է հնագույն անցյալի հետ, մեզ զրաղեցնող ժամանակաշրջանից ավելի հետո՝ V—VI—VII, VIII և ավելի ուշ, մինչև XIII դարը ներառյալ՝ Գառնին իր քարքանդ ու հոգևոր նշանակությունը չի կորցնում: Այդ վայրը ծածկված է ամենուրեք սփռված հուշարձաններով, բայց նրանցից հնագույնի հրապույրից հետո, մյուսներն իրենց հերթին են սպասում հետագա ուսումնասիրությունների համար: Բայց մեծ դեղարվեստագետ և ժամանակը, ամենամակասական վոճերն անգամ յենթակա դարաշրջանների՝ հարթում են տարբեր եպոխաների ճաշակի հակադրությունները՝ զարգնելով նրանց միարնություն, Հնությունը միությունի իր կնիքն և դրել տարբեր ժամանակների շենքերի վրա: Ամրոցի մուտքը և տաճարը շրջապատող լեռնային հեքիաթային բնության հետ կազմում են ընդհանուր գեղարվեստական ներդաշնակություն:

Մանրամասն ուսումնասիրելուց հետո տաճարի կոնստրուկցիան, շինվածքները և բոլոր դետալները՝ մենք հաստատուն ավյալներ ունենք տալու տաճարի վերակազմության նախագիծը, թեկուզ և փոքրիկ յենթադրական լրացումներով՝ ներկայացնելու նրան այն տեսքով, վոր ունեցել է իր շինության ժամանակ: Բոլոր պահպանված ավյալների համապատասխան կապակցումներ անելով, վերջապես փոքրիկ տաճարը ներկայանում է մեզ իր սկզբնական կոկիկությամբ (պատկ. 7, 8):

Տաճարի հիմնական կազմվածքը դժվար չէ պարզել — իրենց տեղում պահպանված մուտքի ասիճանների, պղպումի և կոթողների ու սյուների հետքերի հիման վրա (պատկ. 4—6, 9, 15—17, 20): Պղպումի վերին մակերևույթի վրա յեղած նշանների ոգնությամբ, բավականին ճիշտ կերպով, պարզվում են սյուների համարյա բոլոր առանցքները: Դրանց թիվը, ինչպես յես հիշել եմ վերևում, ծայրաֆասադներում յեղել է վեցական, իսկ կողքերի ֆասադների վրա ութական սյուներ, խարիսխի ձևն ու բարձրությունը հայտնի չեն մեզ լավ պահպանված որինակներից: Դժվարը ամրողջական որդերի լրիվ պարզումն եր, քանի վոր նա կազմված եր առանձին քարերից: Բայց և այնպես հաջողվեց նպատակին հասնել քարերի ընտրությամբ և ճիշտ չափագրումներով: Առանձին մասերը ջոկելու և մեկը մյուսին հարմարեցնելու գործը հեշտանում եր նրանով, վոր տաճարը քանդվելու միջոցին (ըստ իս առաջացած մի քանի նվազ յերկրաշարժերից) քարի կտորներն ընկել և մնացել են իրենց համապատասխան կողմերում. յերկրորդ բախտավոր հանգամանքը այն է, վոր մինչ այժմ վոչ վոք այդ քարերը տեղափոխման չի յենթարկել, վորին, ըստ յերևույթին, խանգարել են գլխավորապես այդ բազալտի կտորների խոշորությունն ու չափազանց մեծ ծանրությունը:

Անտաբլեմենտը, վոր կազմված է յերեք տարբեր շերտերից — կարնիզի, ֆրիզի և արխիտրավի, և պահպանվել են ամբողջ կտորներով՝ տեղի վրա հայտնաբերված են մեծ քանակությամբ: Պահպանվել են նմանապես ֆրոնտոնների կտորները՝ դագաթի մասով և հիմքերով, վորոնց վրա գտնվում են ակրոտերների տեղերը:

Մնում է չպարզված միայն ակրոտերների ձևն ու բնույթը, վորոնք զարդարում եյին ֆրոնտոնների դագաթն ու հիմքերը:

Սկզբում յես կարծում եյի, վոր հարավարևելյան ֆասադի մոտ գտնված մեծ ականթի տերևը (պատկ. 56, 120) պատկանում է ակրոտերներին, բայց նրան դագաթի վրա և ֆրոնտոնի անկյուններում նախագծելու միջոցին պարզվեց նրա անհամաչափությունը ընդհանուր ֆասադի վերաբերմամբ. ուստի յես հրաժարվեցի այդ մտքից և ականթի նշանակությունն ինձ համար մնաց չլուծված գաղտնիք, նամանավանդ, վոր այդ բեկորը պահպանվել է յեղակի որինակով: Այսպիսով, բացառությամբ միայն ակրոտերների, ամբողջ որդերը պարզված է իր բոլոր մասերով և մանրամասնություններով:

Տաճարի ծածկն անպայման յեղել է ուժեղ փայտե գերաններով և կղմինտրներով: Մի այլ կերպ չի կարելի յենթադրել, քանի վոր տաճարի բացվածքը հավասար է համարյա 5,5 մետրի և առանց միջնասյուների նման լայն բացվածքը չեր կարող ծածկվել սալաքարերով. մանավանդ վոր այդպիսիներ բնավ չկան մյուս մնացորդների թվում:

Տաճարի ներսում առաստաղը հավանաբար յեղել է սվաղած, կամ այլ թեթև նյութով փակցրած:

